ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2019/32

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2019 թ. N 32

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝	«Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամ
Գործունեության հասցեն՝	ՀՀ ք. Երևան, Թումանյան 42
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝	№ 9 (11.04.2015թ.), 4 տարի

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2019թ.-ի դեկտեմբերի 18-ին դռնբաց նիստում «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊԼՀ, բուհ կամ համալսարան), փորձագիտական խմբի ղեկավարի, գործընթացի ՈԱԱԿ համակարգողի մասնակցությամբ քննարկեց ԵՊԼՀ ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հանձնաժողովն, ուսումնասիրելով բուհի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ համալսարանի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման մասին բուհի ծրագիրը, ՈԱԱԿ-ի եզրակացությունն, ամրագրեց հետևյալը.

հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 7 ապրիլի, 2018թ.

բուհի ինքնավերլուծության ներկայացում՝ 13 դեկտեմբերի, 2018թ.

բուհի վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 08 փետրվարի, 2019թ.

փորձագիտական այցի իրականացում՝ 14-17 մայիսի, 2019թ.

փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 24 հուլիսի, 2019թ.

թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝ 9 սեպտեմբերի, 2019թ.

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս հաշվի է առնվել, որ նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված խնդիրները հիմնականում կարևորվել և լուծվել են հաստատության կողմից: Առաջնորդվելով փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման իր ծրագրով՝ ԵՊԼՀ-ն ձեռնարկել է համապատասխան բարեփոխումներ իր գործունեության գրեթե բոլոր ոլորտներում՝ բացառությամբ «Հետազոտությունը և զարգացումը» և «Ենթակառուցվածքը և ռեսուրսները» տիրույթների:

Նախորդ հավատարմագրման արդյունքում ԵՊԼՀ փոփոխված առաքելության վերաբերյալ շահակիցներն ունեն գրեթե միասնական ընկալում, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ համալսարանի դերը շահակիցների շրջանում հստակ է: Սակայն բուհի ռազմավարական նպատակների իրականացման արդյունքների գնահատման համար հստակ քանակական ցուցիչների բացակայությունը դժվարեցնում է ԵՊԼՀ-ի առաջընթացի գնահատումը:

Նախորդ հավատարմագրումից հետո բուհի կառավարման գործընթացներում նոր մոտեցումների սահմանումն արդեն ապահովել են շոշափելի արդյունքներ, մասնավորապես՝ վերջին 2 տարվա ընթացքում համալսարանին հաջողվել է հաղթահարել բյուջեի մեծ ճեղքվածքը և 2019թ.-ի համար ձևավորել ավելցուկային բյուջե: Միևնույն ժամանակ, բյուջեի բաշխումը դեռևս չի իրականացվում ըստ ռազմավարական նպատակների:

Բուհում առկա են դասախոսներին և ուսանողներին՝ համալսարանի կառավարման համակարգում ներգրավման մեխանիզմներ, սակայն մագիստրոսների ներգրավված չլինելը ՈՒԽ կազմում չի ապահովում հավասար հնարավորություններ նրանց խնդիրների բարձրաձայնման տեսանկյունից:

Նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված խորհրդատվությունների հիման վրա բուհի կրթական ծրագրերում իրականացվել են համապատասխան բարեփոխումներ: ԵՊԼՀ կրթական ծրագրերը համահունչ են հաստատության վերաձևակերպված առաքելությանը, կազմում են հաստատության գործունեության անբաժանելի մաս և նպաստում են դասախոսների և ուսանողների շարժունությանը:

Գլոբալ աշխատաշուկայի կարիքների ուսումնասիրության արդյունքում՝ բուհում իրականացվում են առավել գրավիչ ոլորտների ուղղությամբ ՄԿԾ-ների մշակման քայլեր, կրկնակի դիպլոմի շնորհմամբ կրթական ծրագրերի իրականացմանն ուղղված միջոցառումներ, սակայն նոր կրթական ծրագրեր առաջարկելիս բուհը պետք է գնահատի և վերլուծի իր ռեսուրսային հնարավորությունները:

Անհրաժեշտ է, որ բուհն ուշադրություն դարձնի թերբեռնված կուրսերում դասընթացների կազմակերպմանն, երկրորդ օտար լեզվի դասավանդման մեթոդներին և ժամաքանակին, հեռակա ուսուցման ձևում իրականացվող դասընթացների դասավանդման և ուսումնառության մեթոդների փոփոխությանը, կամընտրական դասընթացների ավելացմանն, ինչպես նաև օտար լեզուների ուսուցմանն՝ առավելապես մասնագիտացման լեզվով: Կրթական ծրագրերի մշտադիտարկման,

գնահատման և վերանայման գործընթացներում անհրաժեշտ է ակտիվացնել թիրախային գործատուների և շրջանավարտների մասնակցությունը:

Բուհում ձեռնարկվում են դասախոսական կազմը գործատու և օտարերկրյա լեզվակիր դասախոսներով համալրելուն ուղղված ջանքեր, սակայն հայոց լեզվին բացարձակ չտիրապետելու պատճառով վերջիններիս դասավանդումը ցածր կուրսերի ուսանողների համար դառնում է անմատչելի:

Բուհի որոշ ամբիոններում առկա են դասախոսական կազմի գնահատման ընթացակարգեր, վերջիններիս կատարելագործմանն ուղղված տարբեր միջոցառումներ և սկսնակ դասախոսների մենթորության որոշ մեխանիզմներ, սակայն այս և այլ առումներով բուհի տարբեր ամբիոններում և գիտաուսումնական կենտրոններում (ԳՈՒԿ-եր) պետք է կազմակերպել հաջողված փորձի փոխանակում և տեղայնացում:

Պետք է նշել, որ բուհում փոխարինող դասախոսների բացակայությունը ստեղծում է դասապրոցեսի կազմակերպման ռիսկեր, մանավանդ այն պարագայում, երբ համալսարանում դասավանդվում են այնպիսի լեզուներ, որոնց տիրապետող կադրերը ՀՀ-ում սակավ են:

Բուհում իրականացվում են ֆինանսական մուտքերի բազմազանեցման ուղղված քայլեր, սակայն դրանք դեռևս ֆինանսական կայունություն չեն երաշխավորում, քանի որ համալսարանի բյուջեի հիմնական մասը դեռևս ձևավորվում է ուսանողների վարձավճարներից:

Համալսարանի նյութատեխնիկական բազան՝ ուսանողների քանակի և առկա ռեսուրսների հարաբերակցության տեսանկյունից բավարար չէ բուհի կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար: Նախորդ հավատարմագրումից հետո բուհն այս ուղղությամբ տեսանելի առաջընթաց չի գրանցել:

Բուհում գործում են ուսանողների համալրման ընթացակարգեր, սակայն մագիստրատուրայի ընդունելության ժամանակ միայն ՄՈԳ-ի հաշվի առնումը ստեղծում է անհավասար մրցակցային պայմաններ, քանի որ ուսանողները բարձր ՄՈԳ-ի շնորհիվ կարող են նույնիսկ անվճար հիմունքներով ուսումնառել իրենց մասնագիտության հետ ընդհանրություններ չունեցող մեկ այլ մասնագիտությունում, որի համար անհրաժեշտ բազային գիտելիքների չեն տիրապետում:

Համալսարանը որդեգրել է բաց դռների քաղաքականություն, որի շնորհիվ ուսանողներն իրենց հարցերով ազատ դիմում են վարչական և դասախոսական կազմին: Ուսանողների համար ստեղծված են լրացուցիչ պարապմունքներ և խորհրդատվություն ստանալու հնարավորություններ: Առկա են նաև միջազգային համագործակցությունները, որոնց շնորհիվ ապահովվում է ուսանողների՝ շարժունության ծրագրերին մասնակցությունը: Ինչ վերաբերում է հետազոտական աշխատանքներում ընդգրկվածությանն, ապա ուսանողները մոտիվացված չեն ներգրավվելու հետազոտական աշխատանքներին. այս առումով բուհը դեռևս քայլեր չի իրականացրել նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված խնդիրների լուծման ուղղությամբ: Ուսանողների իրավունքների պաշտպանության պատասխանատու հիմնական կառույցի՝ ՈՒԽ-ի գործունեության արդյունավետությունը դեռևս վաղ է գնահատել, քանի որ վերջինս վերակազմավորման փուլում է: Այնուամենայնիվ, ուսանողների շրջանում կա այս կառույցի վարկանիշի բարձրացման անհրաժեշտություն, քանի որ ուսանողներն իրենց անհանգստացնող խնդիրներով առավել հաճախ դիմում են վարչական օղակներին, քան ՈՒԽ-ին: Անհրաժեշտ է նշել,

որ բուհի Կարիերայի կենտրոնի կողմից իրականացվող միջոցառումները նպաստում են ուսանողների մասնագիտական առաջընթացին:

Թեև գիտահետազոտական գործունեությունը ԵՊԼՀ ռազմավարական գերակայություններից է, սակայն այդ ոլորտը խթանելու նպատակով նախորդ հավատարմագրումից հետո բուհը շոշափելի քայլեր դեռևս չի կատարել: Այս ուղղությամբ ֆինանսական հատկացումները չնչին են, այն էլ՝ միայն գործուղումների համար: ՊԴ կազմի կողմից իրականացվող հետազոտություններն իրականանում են հիմնականում դասախոսների անձնական նախաձեռնությունների շնորհիվ՝ սեփական հետաքրքրությունների շրջանակում և ինքնաֆինանսավորմամբ: Սա, ինչպես նաև ուսանողների՝ գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվածության ցածր տոկոսը հետևանք են համալսարանի կողմից հետազոտական տիրույթի զարգացմանն ուղղված մոտիվացիոն մեխանիզմների բացակայության: ՄՈՒՀ-ի դասախոսների՝ միջազգային պարբերականներում և ազդեցության գործակից ունեցող հեղինակավոր ամսագրերում հրապարակումները սակավաթիվ են: Ուսումնական գործընթացում հետազոտությունների արդյունքների ներառումը կրում է իրավիճակային բնույթ և չի իրականացվում հստակ գործող կայուն մեխանիզմների միջոցով:

ԵՊԼՀ-ն իրականացնում է հասարակության տարբեր խմբերի համար գիտելիքի փոխանցման և լրացուցիչ կրթական ու խորհրդատվական բազմաբնույթ ծառայություններ:

Արտաքին կապերի և միջազգայանցման ուղղությամբ նախորդ հավատարմագրումից հետո բուհն իրականացրել է համապատասխան բարեփոխումներ. բուհում գործում են միջազգային բազմաթիվ ծրագրեր, առկա է հասանելիություն միջազգային տվյալների շտեմարաններին: Սակայն բուհը կշահեր, եթե բարձրացներ միջազգային տարբեր ծրագրերից օգտվող ուսանողների և աշխատակիցների թիվն, ինչպես նաև իրականացներ կրթական ծրագրեր օտար լեզուներով:

Որակի ապահովման ուղղությամբ նախորդ հավատարմագրման արդյունքում նույնպես իրականացվել են համապատասխան բարեփոխումներ: ԵՊԼՀ շահակիցների շրջանում տարվել են որակի ապահովման մշակույթի տարածման աշխատանքներ, սակայն այս ոլորտում՝ իր առջև դրված նպատակների առումով բուհը դեռևս շատ անելիքներ ունի:

Ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերի փաթեթը, լսելով փորձագիտական խմբի ղեկավարի և բուհի ներկայացուցիչների կարծիքները, հաշվի առնելով, որ.

ա) ԵՊԼՀ-ն նախորդ հավատարմագրման արդյունքների հիման վրա կարողացել է համապատասխան բարեփոխումներ իրականացնել իր գործունեության գրեթե բոլոր ոլորտներում,

բ) ինստիտուցիոնալ կարողություններում վեր են հանվել որոշակի թերություններ.

1) **«Հետազոտությունը և զարգացումը»** ոլորտի թերությունները թուլացնում են ուսումնական հաստատության որպես «համալսարան» կառույցի դիրքերը կրթական դաշտում, կարող են խանգարել շրջանավարտների մոտ հետազոտական հմտությունների և վերլուծական կարողությունների ձևավորմանը, խոչընդոտել դասախոսական կազմի մասնագիտական կատարելագործմանն՝ արդյունքում նաև վտանգելով դասընթացների ծրագրերի արդիականացման գործընթացը:
2) **«Ենթակառուցվածքը և ռեսուրսները»** ոլորտի թերությունները խոչընդոտում են բուհի կրթական ծրագրերի արդյունավետ իրականացմանն՝ ուսումնառողների քանակի և առկա նյութատեխնիկական ռեսուրսների հարաբերակցության տեսանկյունից:

գ) փորձագիտական զեկույցում նշված թերությունները չեն ազդում շրջանավարտների որակավորումների շնորհման արժանահավատության վրա,

դ) հաստատության ուժեղ կողմերի, հնարավորությունների, խնդիրների, բարելավման կարիք ունեցող ոլորտների վերլուծության հիման վրա կազմված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման՝բուհի ներկայացրած ծրագիրը, փորձագիտական խմբի կողմից նշված խնդիրների շտկումից հետո, կդառնա իրատեսական և միտված առկա իրավիճակի բարելավմանը՝

Հավատարմագրման Հանձնաժողովը քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Երևանի Վ. Բրյուսովի անվման պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմադրամին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4/չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով.

   ա)«Հետազոտությունը և զարգացումը» և «Ենթակառուցվածքը և ռեսուրսները» ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,

   բ) բուհի կողմից իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման առաջընթացի քանակական ցուցիչներ ունենալու պահանջը,

   գ) բուհի կողմից իրականացվող գործընթացների իրականացման և գնահատման համար նախանշված ժամկետների և նախատեսվող ֆինանսական միջոցների չափի հստակեցման անհրաժեշտությունը,

   գ) Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու համալսարանի հավակնությունների տեսակետից՝ միջազգային փորձագետի գործընկերային գնահատման արդյունքները:
3. Հատուկ ուշադրություն դարձնել ուսումնառության և հետազոտության կապի ամրապնդմանը, կառավարման համակարգի բարելավմանն, անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի արդիականացմանը, պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստմանը, դասախոսների և ուսանողների շարժունությանը, որակի ներքին ապահովմանը:
4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարին մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով համալսարանի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել համալսարանի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ս. Ավետիսյան**
2019 թ., դեկտեմբերի 18
ք.Երևան